



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

Կ Ա Ր Գ Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

29 հուլիսի 2019 թվականի N 257- Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՈՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԱՊԱՐԱՏԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԾԱԽՍԵՐՈՎ «ԱՅԼ ՆՊԱՍՆԵՐ ԲՅՈՒՋԵԻՑ» ՀՈԴԿԱԾՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԾԱԽՍՄԱՆ ՀԱՄԱՐ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՈՒ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՆՁՆԱԺՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 2-Ի N 11-Ա ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 36-րդ հոդվածով

կարգադրում եմ.

1. Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետարանի ապարատի պահպանման ծախսերով «Այլ նպաստներ բյուջեից» հոդվածով նախատեսված գումարների նպատակային ծախսման համար ուսումնասիրություններ կատարելու ու առաջարկություններ ներկայացնելու նպատակով ստեղծել հանձնաժողով հետևյալ կազմով.

- Ֆելիքս Ափինյան - Հանձնաժողովի նախագահ, «Տավուշի մարզպետարանի գլխավոր քարտուղարի տեղակալ
- Արբակ Գրիգորյան - «Տավուշի մարզպետի խորհրդական
- Ռուբեն Տիգրանյան - «Տավուշի մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետ
- Նարինե Ճաղարյան - «Տավուշի մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության գլխավոր մասնագետ
- Տիգրան Մուշեղյան - «Տավուշի մարզպետարանի քաղաքաշինության վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար

Հարություն Քոչարյան - Հանձնաժողովի քարտուղար, «Տավուշի մարզպետարանի ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի վարիչ:

2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետի 2015 թվականի ապրիլի 2-ի <<Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետարանի ապարատի պահպանման ծախսերով <<Այլ նպաստներ բյուջեից>> հոդվածով նախատեսված գումարների նպատակային ծախսման համար ուսումնասիրություններ կատարելու, առաջարկություններ ներկայացնելու նպատակով հանձնաժողով ստեղծելու և Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետի 2011 թվականի ապրիլի 7-ի N 22-Ա կարգադրությունն ուժը կորցրած ճանաչելու մասին>> N 11-Ա կարգադրությունը:

3. Հանձնարարել հանձնաժողովին՝ ուսումնասիրել ստացված դիմումները, առնվազն 15 օրը մեկ քննարկել մարզպետի հետ, կազմել արձանագրություն և ներկայացնել որոշման նախագիծ բնակիչներին դրամական օգնություններ տրամադրելու համար:

ՄԱՐԶՊԵՏ

Հ.ԶՈՐԱՆՅԱՆ

X



2019թ. հուլիսի 29  
ք.հջևան